

Կապադովկիոյ եւ Սիրիոյ», ինչպէս նաեւ Բիւզանդիոնի դրամագիտութեան մեծածաւալ հատորները, Stanley Lane Poole-ի Բիւիտ. Թանգարանի Արեւելեան Խալիփներու, Սելուկեաններու ու այլ եւ այլ իշխանապետութեանց դրամագիտութեանց հատորներ, Օսմանեան Թանգարանի Օսմայեան, Աբբասեան, Խալիփայի ու Ամիտի Որտոկեաններու, էյուբեան Շահ-Արմէններու, Սելուկեաններու ու այլ եւ այլ մեր երկրի զանազան մասերու մէջ հաստատուած իշխանապետութեանց դրամներու ցուցակները: Այսպէսով կը փակուէր մեծամեծ դործերով հարուստ այս շրջանը ու փառաւոր վերելքին կը յաջորդէր անփառունակ վայրէջքը, որ դժբախտաբար մինչեւ այսօր կը շարունակուի տակաւին:

Չորրորդ ու վերջին շրջանը (1904-1950) ցանցաւ է դրամագիտական լուրջ ուսումնասիրութիւններով: Շրջանին կեդրոնածիւղ դրամագէտը կը հանդիսանայ Կ. Բաւմաշեան: Չինք կարելի է նմանցնել ընդարձակ խաղաղայրի մը կեդրոնը կանդնած դատաւորի մը, որ ի զուր կը սպասէ մարդիկներու ժամանումին ու ժողովուրդի խանդավառութեան եւ հուսկ ուրեմն յուսահատ, ինք առանձինն կը սկսի վազվզել պարապ դաշտին չորս բոլորտիքը: Ունի դրամագիտական շարք մը յօդուածներ: Իր դրամագիտական գլխաւոր գործն է «Հայկական Ընդհանուր Դրամագիտութիւն»ը որ տպուած է Վենետիկ, Ս. Ղազարու տպարանը եւ արժանացած է Գուրեան մրցանակին: Գործը թէեւ կը տառապի իր ոչ գիտական նկարագրով ու նաեւ գիտական շովինիզմէ, սակայն ան կը հանդիսանայ հոսմ նիւթերու հարուստ շտեմարան մը որ կը սպասէ ընդլայնումի ու լուրջ մշակումի:

Այս շրջանի հանդէսներու, օրաթերթերու, տարեցոյցներու մէջ ցանցնուած կը գտնենք ոչ-գիտական մշակումով ու մակերեսային անհամար յօդուածաշարքեր,

որոնք մեծաւ մասամբ հապճեպ ընդօրինակութիւններ են միայն եւ ոչինչ կ'աւելցնեն հիներու վաստակին վրայ: Յիշատակութեան արժանի են Երեցեանի ու Տոք. Տէր-Ղազարեանի ստորագրած ուսումնասիրութիւնները միայն: Յիշենք դարձեւ Babelon-ը որ Փարիզի «Académie des Inscriptions et Belles-Lettres»-ի 1911-ի նիստերուն միոյն մէջ կը զեկուցանէ՝ Գերմանիկոս Կայսեր եւ Արտաշէս հայ թագաւորի մէկ դրամի մասին: Ամերիկացի դրամագէտ Newell 1926ին «Numismatic notes and monographs» հանդէսին մէջ կը հրատարակէ Տիգրանեան անտիպ դրամ մը որ թարգմանաբար մեզի ներկայացուց 3. Քիւրտեան «Հայաստանի Կոնսակ» շարք-թաթերթին մէջ: Իսկ վերջին տարիներուն հայկական դրամագիտութեան մեծագէտ նպատակներն կարգ մը նշանաւոր դրամագիտներ, որոնցմէ յիշենք Տափնէի դրամագիտը որ այժմ կը պահուի Երեւանի Պետական Պատմական Թանգարանի մէջ: Թող չկարծուի սակայն որ վերեւ յիշատակուած ուսումնասիրութեանց մէջ հազարաւոր հայկական դրամ հրատարակուած ըլլայ: Tristan-ով սկսող ու Adler-ով վերջացող 150 տարուայ ընթացքին, մարդիկ վիճած ու խօսած են միայն մէկ հատիկ դրամի մասին ու ընդամենը երեք դրամ հրատարակած: Sestini-ն որ հրատարակած էր ինք դրամ՝ պէտք է զեղչել երեք հատը, որովհետեւ անոնք հայկական չեն: Brosset հրատարակած է 18 դրամ: V. Langlois, որ ինչպէս ըսինք պաշտօնական հիմնադիրն է մեր դրամագիտութեան եւ մասնաւոր հնագիտական առաքելութեամբ ճամբորդած Կիլիկիա, իր երկու հատորներուն մէջ հրատարակած է 150 դրամ ու նշած զանազան թագաւորներու ու անհատական հաւաքածոներու մէջ գտնուող հարիւրի չափ ալ տարբերակներ: Հ. Սիլիկեան հրատարակած է 100 դրամ ու նշած 100 այլ տարբերակներ: Իսկ Կ.

Բաւմաշեան եղածներուն վրայ համարեալ ոչ մէկ բան աւելցուցած է: Եթէ 300 տարուան հրատարակուած բոլոր դրամները նկատի առնենք, տեսակներու կամ տարբերակներու թիւը 300-ը չ'անցնիր:

Շատ արագօրէն ուրուագծուած՝ այս է եղած մեր ազգային ու պատմական դրամներու հաշուեկշիռը՝ անցնող երեք դարերու ընթացքին:

* * *

Այժմ անցնինք Վենետիկ, Հայոց Ս. Ղազարու վանքը, ու տեսնենք թէ այս դարաւոր ու պանծալի Հաստատութիւնը հերթին ի՞նչ նպատակ բերած է հայկական դրամագիտութեան:

Մենք կը հաստատենք որ՝

1) առաջին հարազատ հայկական դրամը որ թուականէս մօտ երկու դար առաջ հրատարակած է Marquis de Savorgnan, կը պատկանէր Ս. Ղազարու Թանգարանին, ու այդպէս ալ յիշատակուած է արդէն:

2) Առաջին հայկական դրամներ հրատարակող հայը եղած է Վենետիկի Միխիթարեան Միարանութեան երեւելի անդամներէն պատմագէտ Հ. Միք. Վրդ. Չաւչեանը, իր ընդարձակ ու անդերազանցելի Հայոց Պատմութեան երրորդ հատորին մէջ եւ որպէս այդ՝ քանիցս յիշատակութեան արժանացած է եւրոպացի դրամագէտներու կողմէ:

3) Առաջին անգամ հայ դրամներ ուսումնասիրողը ու դասաւորողը եղած է Վենետիկի Միխիթարեան Միարանութեան անդամներէն բաղմահմուտ Հ. Ղուկաս Իննիսեան Վրդ. Բ. հասկնալի ընելու համար այս շատ կարեւոր պարագան՝ այստեղ կը բանաճ փակալիմ մը:

(Վերեւ մատնանշեցի որ խտալացի դրամագէտ Sestini-ն եղաւ առաջին հեղինակը որ մեծ թիւով հայկական դրամներ հրատարակեց 1789ին: Արդ ո՞վ էր այս

վանականը եւ այդ մութ շրջանին ի՞նչպէս յաջողած էր այդքան դրամներ հաւաքել, ուշի ուշով ուսումնասիրել ու կարգաւ հայերէն խորագրերն ու ապա պատմական մանրամասնութիւններով հրատարակել: Sestini-ն, պէտք է նաեւ խոստովանի, իր ժամանակի դրամագիտական աշխարհին ծանօթ նշանաւոր գիտնականներէն էր: Անիկա ոչ միայն հրատարակած էր առաջին անգամ ըլլալով այդ դրամները, այլ նաեւ տուած էր հին ու նոր Հայաստաններու բոլոր արքայատոհմերու ժամանակագրական ընդհանուր ցուցակները: Տուած էր նաեւ հայկական գրերու այլապան նմանահանութիւններն ու անոնց արժէքները մասնաւոր ցանկէ մը արտագրուած: Այս շատ հետաքրքրական հարցումին պատասխան՝ կու տայ Հ. Իննիսեան Միխիթարեան իր «Դարապատում» շարքին վերջին հատորին մէջ, ուր կը կարգանք հետեւեալը. — «Անգլէ ինկլիզին դեսպանը որ ումիլիէն, անատուէն շատ հին բանք, աւելի հին ստակներ բերել տալով՝ մէկ հարուստ հանդիսարան մը շրտկեց 100 հազար հին ըստակներով, ասոնք կարգաւորողը, ցանկը շինողը հինգ մեծ ձեռագիր հատորով՝ եղաւ Տօմիսիֆօ Սեստինի Ֆիօնեցացին, որ իրեն հնագէտն էր: Երբ որ 1788 Ստամբուլ Այնգլէ դեսպանը մեզի հետ տեսնելիս եղաւ, դեսպանը մեզի հետ տեսնելիս եղաւ, շատ մարդասիրութեամբ՝ ցըցուց դուրս ձգած անանկ հին ըստակներ՝ որոնց ծանօթութիւն չունէինք. անոնց մէջ գտանք ուրիշներ քաղաքացի հայկական ըստակներ, որ քէպտ շատ էին, բայց կըրկուտակները գտնուով 12 մը ելան: Մեր անանկը, կարգի դնելը ստիպեց դեսպանը մեզ տեղեկութիւն ուզել այս ըստակներու վրայ. հարկ եղաւ մեզի ուրիշներ քաղաքացի յաջորդութեան պատմութիւնը կարգաւ շինել, իրեն հնագրին Սեստինիին յանձնել, նաեւ հայկական գրերու հին ու նոր ձեւերը քաշել, որոնց վրայ խտալերէն

